

Շրջակա միջավայրի վրա  
ազդեցության գնահատման  
հաշվետվություն

ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամաս հասցեում  
նախատեսվող հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի

/լրամշակված/

ՊՍՏՎԻՐՍՈՒՄ՝ Վ.Թումանյան

<<Էկո Գրուպ ԱՄ>> ՍՊԸ

Տնօրեն

Ա.Մինասյան

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.2	Հապավումներ	4
1.3	Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը	5
1.4	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	6
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.5.1	Նախատեսվող գործունեության նկարագիր	7
1.5.2	Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց	15
1.5.3	Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա	16
1.5.4	Ինժեներական ցանցեր	16
2.	ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	17
2.2	ՌԵԼԵՖ	17
2.3	ԿԼԻՄԱ	17
2.4	ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ	18
2.5	ՀՈՂԵՐ	19
2.6	ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	20
2.7	ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ	20
2.8	ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	21
	ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՋՐԵՐ	21
	Հրազդան ԳԵՏԸ	21
3.	ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՋՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	26
3.1	Ջրոյական տարբերակ	26
3.2	Քննարկվող տարբերակներ	26
4.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	28
4.1	Շինարարական աշխատանքներ	28
4.1.1	Օղի աղտոտում	28
4.1.2	Աղմուկի և թրթռումների ազդեցություն	29
4.1.3	Ջրօգտագործում և ջրահեռացում	29
4.1.4	Ազդեցությունը հողածածկի վրա	31
4.1.5	Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա	31
4.1.6	Շինաղբ	31
4.1.7	Սոցիալական ազդեցությունը	31
4.2	Շահագործման փուլ	32
4.2.1	Օղի աղտոտում	32
4.2.2	Այլ ազդեցություններ	35
4.3	Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն	36
5.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	37
6.	ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕԴԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	39

7.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	39
7.1	Ռիսկերի գնահատում .....	39
7.2	Արտանետումների աղբյուրները .....	40
7.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն .....	40
7.3.1	Մթնոլորտային օդ .....	40
7.3.2	Ջրային ռեսուրսներ .....	40
7.3.3	Հողային ռեսուրսներ .....	41
7.3.4	Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները .....	42
7.3.5	Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ .....	42
7.3.6	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը .....	43
7.3.7	Աղմուկ .....	44
8.	Մշտադիտարկումների իրականացման պլան .....	45
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	46
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ .....	49
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	25
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	26
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....	27

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

- 1.2 Ձեռնարկող՝ Քաղաքացի Վարդան Թումանյան
- 1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Ք.Երևան, Դեմիրճյան փող, 17ա, բն 22
- 1.4 Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի վարչական շրջան 23-րդ փողոց 8 հողամաս
- 1.5 Նախատեսվող գործունեության վարչական տարածքը՝ Կոտայքի մարզ Պտղնի վարչական շրջան
- 1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ <<Պրոֆէներջի>> ՍՊԸ

1.2 Հապավումներ

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն
- ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն
- ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
- ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

### 1.3 Նախատեսվող գործունեության նպատակը եվ հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի (բենզին, դիզելային վառելիք) լիցքավորման կայանը նախատեսվում է ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամաս հասցեում: Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի աշխատաքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման գնահատման հաշվետվությունը նկարագրում է նախատեսվող գործողությունները, բնապահպանական ելակետային պայմանները, հնարավոր ազդեցությունները, բնապահպանական ազդեցության գնահատման շրջանակը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

#### 1.4 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

*«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)*

*«ՀՀ ջրային օրենսգիրք» (2001)*

*«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»*  
ՀՀ օրենք (2014)

*«Մթնոլորտային օդի մասին» ՀՀ օրենք*

*«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք*

*«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք*

*«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004)*

*«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք*

*«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)*

*«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենք*

*ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781*

*ՀՀ կառավարության 2010 թվականի N 71-Ն որոշում*

*ՀՀ կառավարության 2010 թվականի N 72-Ն որոշում*

*ՀՀ կառավարության 14.08.2008 թվականի N 967-Ն որոշում*

*ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում*

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

**1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)**

**1.5.1 Նախատեսվող գործունեության նկարագիր**

ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամաս հասցեում, նախատեսվող ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի նախագիծը մշակվել է «Պրոֆէներջի» ՍՊԸ-ի կողմից, համաձայն նախագծային առաջադրանքի:

Տարածքում կառուցապատում իրականացնելու համար հիմք է հանդիսանում տարածքի սեփականատեր Վարդան Թումանյանի սեփականության իրավունքը հաստատող N 11082020-07-0162 անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականը և Պտղնի համայնքի կողմից 05.10.2020 թ տրամադրված N40 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախատեսվող լիցքավորման կայանի նկարագիրը՝

ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամաս հասցեում

- Ընդհանուր մակերես – 5000քմ;
- Մուտքը և ելքը ապահովելու համար վարձակալման ենթակա մակերես 550քմ;
- Կառուցապատման մակերես - 3500 քմ
- Կանաչապատման մակերես –1500 քմ

Տարածքում նախատեսվում է

- Հեղուկ գազի ստորգետնյա գազամբար V=5խմ;
- Ընդունիչ
- Սնող հեղուկ գազի պոմպ
- Հեղուկ վառելիք (դիզվառելիք) ստորգետնյա տարա V=16խմ
- Հեղուկ վառելիք ստորգետնյա տարա V=5 խմ
- Հեղուկ վառելիք ստորգետնյա տարա V= 5 խմ
- Ընդունիչ տարաներ 60լ
- Պահեստային տարաների վառելիքալցման կետ:
- Հողատարածքի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի;
- Հողատեսքը՝ հասարակական կառուցապատման;
- Իրավունքի տեսակը սեփականություն:

Նախագիծը կատարված է ՀՀ-ում գործող կանոնների, դրույթների և պատվիրատուի առաջադրանքի հիման վրա:

Շրջակա հատվածներում գոյություն ունեցող շինություններ բացակայում են: Ավտոմեքենաների լցակայանը մեկուսացված է բնակելի զանգվածից շինարարական նորմերի պահանջներին համապատասխան:

Ավտոմեքենաների լիցքավորման կայանը բաղկացած է օպերատորային շինությունից, կոմպրեսորային կայանից, ստորգետնյա հեղուկ վառելիքի պահեստներից, ավտոմեքենաների լիցքավորման կայանից, ծածկարանով, ջրի հակահրդեհային ստորգետնյա տարաներից, շանթարգելներից:


Օպերատորային շինությունը իրենից ներկայացնում է 21.0x13.0 արտաքին չափերով 6,5մ բարձրությամբ միահարկ շինություն, որտեղ տեղաբաշխվելու են օպերատորի, տնօրենի սենյակները, սանհանգույցները նախատեսված տղամարդկանց և կանանց, հաշմանդամների համար, հանգստի և սննդի սենյակը, սպասարանը: Օպերատորային շինության ներսի մաքուր բարձրությունը նախատեսված է 3.5մ: Տանիքը հարթ՝ արտաքին ջրահեռացմամբ:

Ծածկարանը 32,5 x 8,00 մ առանցքային չափերով շինություն է 6,5մ բարձրությամբ:

Նախագիծը կատարված է ՀՀ-ում գործող ՀՀՇՆ IV-12.03.01-04, (գազաբաշխիչ համակարգեր) ՇՆՁ IV-12.101-04, Գազաբաշխիչ համակարգերի նախագծում և շինարարություն, շինարարական նորմերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 28.08.2008 թ. (Ավտոգազալիցքավորման ճնշակայանների (ԱԳԼՃԿ) կառուցման և շահագործման նվազագույն պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 1101 -Ն և ՀՀ կառավարության 22.12.2005 թ. Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում Տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին N 2399 -Ն որոշումների հիման վրա:

Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման և շահագործման ընթացքում կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 21-Ն հրամանի պահանջները:





ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:4000

« ԿՈՏԱՅԵԻ ՄԱՐԶ, ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ  
 23 - ՐԴ ՓՈՂՈՑ 8 - ՀՈՂԱՄԱՍՈՒՄ  
 «ԵՂՈՒԿ ԿԱՌՈՒՆԻՔԻ ԼԻՑԵԱԿՈՐՄԱՆ ԿԱՅՄԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ»



ԴԱՏԱԿՐԱՏԻՔ  
 ԿԱՌԱՅՆ ԵՌԱՆՆԱԿ

ՆԱԽԱՐԱՐՈՒ  
 «ԿոնՏրուսթ» ՍՊԸ  
 address: Yerevan, Tigran St  
 phone: 01077000  
 e-mail: info@profenergy.am  
 web: http://profenergy.am

ԴՈՏԱԿԱՆ ԼԻՑԵԱԿԱՆ ՈՒՅՑ  
 ԱՐԴՎ-054

ՆԱԽԱՐԱՐԻ ՆԱԿԱՆՈՒՄԸ  
 «ԵՂՈՒԿ ԿԱՌՈՒՆԻՔԻ ԼԻՑԵԱԿՈՐՄԱՆ ԿԱՅՄԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ»

ԴՈՒՎԱԿԵՐԻ ԿԱՅՄՈՒ  
 «Ը ԿՈՏԱՅԵԻ ՄԱՐԶ  
 ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔ  
 23 - ՐԴ ՓՈՂՈՑ 8 - ՀՈՂԱՄԱՍՈՒՄ»

ՔԱՅԱՆՔԱՐԻ

ԴՈՒՎԱԿԵՐԻ ՆԱԿԱՆՈՒՄԸ  
 ՏԱՍԿԻՆ ԸՏԱՎԱՅԻՑ Մ 1 - 4000

ՆԱԽԱՐԱՐԱՅԻՆ ՕՐՈՒ  
 ԱՄԽԱՆԱԳԱԳՅԻՆ ԽԱՅԱՅԻՑ

ԴՈՒՎԱԿԻ ԸՏԱՎՈՐ	ՆԱԿԱՆ ԸՏԱՎՈՐ
	01-017
	ՆԱԽԱՐԱՐՈՒ 1:4000

ՅԱՐՈՒՆ	Ն. Կոնյալյան
--------	--------------


ՄԱՏ	Հ. Կոնյալյան
-----	--------------

ՃԱՆՑ	Հ. Կոնյալյան
------	--------------

ԱՄՈՒՅՈՒՆ	Ս. Կոնյալյան
----------	--------------

ԱՄՈՒՆ	ԹԻՐՈՒ	ԹԻՐԱՐՈՒ
1	62	21

ՃԱՐՏԱՐՔԻ ԿԱՌԱՅՈՒՄ



ԿԱՏԱՐԱՐՈՒՄ  
ՎԱՐՈՒՄ ԶԻՆՆԱԾՆԱԾ

ՆԱԽԱԳՈՒՄ

"Խոնձուրի" ՍՊԸ

address: Yerevan, Tigranini  
phone: 010 77 01 07  
e-mail: info@profenergy.am  
web: http://profenergy.am

ԴՊՏԱԿԱՆ ԱՅԹՆԱԾՈՒՄ NO  
ՃՐԿ-0284

ՆԱԽԱՐԱԿԻ ԱՎԱՆՈՒԿԱՆ  
ՀՈՐԻԿ ԿԱՌՈՒՑՈՒՄԻ  
ԱՅԹՆԱԾՈՒՄՆԱԿԱՆ  
ԿԱՌՈՒՄ

ԳՆԱՀԱՏՈՒ ԿԱՅԻՑ

ՀՀ ԿՐԻՍՏԻՆԻ ՍՏՐԱՆ  
ԴՊՏԱԿԱՆ ԱՅԹՆԱԾՈՒՄ  
ՅՑ - ԴՊ ԶԻՆՆԱԾ  
Ց - ՊՐԱՏՄԱՆ

ԲԱՍՏԱՆԱԿԻ

ԳՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՎԱՆՈՒԿԱՆ  
ՇՐՋԱՆԱԿԱՆՈՒՄ N 1 - 028

ՆԱԽԱՐԱԿԱՆ ԺՈՒՄ  
ԱՅԿԱՆԱԳՐԱԿԻ ՆԱԽԱԳԵՐ

ՁԱՆՈՒՄ ԳՆԱԾՈՒՄ	ՆԱԽ ԱՎԱՆՈՒՄ
	04.07
	ԱՎԱՆՈՒՄ
	1:1000


ՑՈՒՆ	Ն. Խոնձուրի
ՆԱԾ	ՎԱՅՏՅԱՆ
ՃԱՐԿ	ՎԱՅՏՅԱՆ


ԱՎԱՆՈՒՄ


ԱՎԱՆՈՒՄ	ՁԵՐՈՒՄ	ՁԵՐՈՒՄ
1	64	21

ՃԱՐՏԱՐԱՐՏԻՄԱՆ ԱՆՈՒՄ





	ՊԱՏՎՈՐԱԾ ԿՐԻՏ ԹԻՎԱԿԱՆ	ՊԵՏԱԿԱՆ ՍԻՑԱՆԻ ԱՆՔԻՎՈՅ	ԳՆԱԿԵՐԻ ԿԱՑՈՐ	ԳՐԱԿԵՐԻ ՄԱԿԱՆՈՒՄ ԸՆԿՐՈՐ ՀԱՏՎԱԾՈՒ Մ 1 - 500 ՆՈՐԱՏԻՎԱՅԻՆ ՀՆԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՔԱՆ. ԱՐՄԱՆ 1500	ՏՈՒՐՈՆ ՄԱ	Ն. Պարսյան	ԳԱՐԱԿԵ	ՀԱՐՑԱԳԱՆ	ԱՄՈՒՆԵՐ	ԱՄՈՒՆԵՐ	ԱՄՈՒՆԵՐ
	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՍՏԱԿՏ "ԷՆԵՐՅՈՒՆ" ՍՊԸ	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՍՏԱԿՏ "ԷՆԵՐՅՈՒՆ" ՍՊԸ	ՍՊ. ԿԱՐԱՍՆԱԿԱՆ ԳՐԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՍՏԱԿՏ	ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐ ԼԵՂԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄՍՏԱԿՏ	1500	ՄԱ	ՀԱՐՑԱԳԱՆ	ԱՄՈՒՆԵՐ	ԱՄՈՒՆԵՐ	1	44	21
	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ								





ՀՀ Էդուարդ Քոչինյան

Տրամադրված տեղեկատվությունը՝

18.04. 2022թ.

(տրման ամսաթիվը)

Գ/Գ	Մարզ	Համայնք, քաղաք, գյուղ, վարչական շրջան	Ծածկագիր	Կադաստրային քարտեզ		Շրջադարձային կետերի կոորդինատներ		Տպագրված թերթեր	
				Միավորի քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)
1	Կոտայք	Պտղնի	0332-0007	1	100	7	700	1	300

Վճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 2200 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի կողմից:

Սպասարկման գրասենյակ՝ Կ.Տ



Կոտայքի մարզ  
Արզվյան համայնք  
Պտղնի գյուղ  
Հատված կադաստրային քարտեզից  
Կադաստրային ծածկագիր՝ 07-054-0332-0007  
Մասշտաբ 1: 1000



Կողմիցանուն		
	X	Y
1	8465810.1945	4458477.1997
2	8465772.9895	4458506.0849
3	8465746.2980	4458456.4618
4	8465721.3059	4458418.2579
5	8465742.4347	4458402.1210
6	8465758.6880	4458389.7077
7	8465781.5567	4458415.5987



սպասարկման գրասենյակ

1.5.2 Շինարարական աշխատանքների իրականացման աշխատանքային ժամանակացույց

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԸՍՏ ՕՐԵՐԻ						
		30	30	30	30	30	30	30
1	Քողային աշխատանքներ	■						
2	Երկ կոնստրուկցիաներ, հիսքեր		■	■	■			
3	Մետաղական կոնստրուկցիաներ				■			
4	Մետաղական տարրաների տեղադրում					■		
5	Տեխնոլոգիական սարքավորումների մոնտաժում						■	■
6	Բարեկարգման աշխատանքներ							■

ՃԱՆՈՒՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱՊԵՅ ՀՈՒՆԱԿԱՆ ՏՐԱ. ՄԵՔԵՆԱՆԵՐ, ՄԵՆԱՄԻՋՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՆՈՐՈՒՄՆԵՐ

ԴԻՐԸ	ԱՆՎԱՆՈՒՄ	ՄԱԿԻՇ	ՔԱՆԱԿ
1	Ավտոկոուցն	ՄՔԴ 25 ԵՔ	
2	Էքսկավատոր	ՅՕ - 3322	
3	Բուլդոզեր	ԴՏ 756	
4	Ինճեքարակի ավտոմեքենա	Կանազ	
5	Խողջային քրթիչ	Մ - 801	
6	Էլ. եռալցման սարք	ՍՏԷ - 34	
7	Շաղախախառնիչ	Վ - 250	
8	Բեռնատար ավտոմեքենա		



ՊՈՒՑԻՆՍՏԻ

ՀԵՄԱՆ ԹՐԱՄԱԿ

ՆԱԿԱԳՈՐԻ

«ՊՐՈՖԵՆԵՐՅԻ» ՍՊԸ

address: Yerevan, Tigran 01  
phone: 010277111  
e-mail: info@profenergy.am  
web: http://profenergy.am/

ՊԵՏԱԿԱՆ ԼԻՑԵՆԻԱ ՈՒՅ

ՔՆ. - 1000

ՆԱԿԱԳՈՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ

ՊՐՈՒԿ ԿԱՌԱՅՈՒՄԻ ԼԻՑԵՆԻԱՄԱՍ ԿԱՅՄԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ

ԳՏԱԿՆԵՐ ԿԱՅՄԸ

11 ԿՈՏԱՅԷՆ ՄԱՐԶ  
ՊՐՈՒԿ ՔԱՄԱՅԷՆ  
23 - ԴՆ ՔՈՒՐՈՑ  
8 - ԿՈՒՄԱՆԱ

ՔԱՅԱՏՐԱԿԻ

ԳՏԱԿՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄ  
ՕՒՆԱԿԱՅՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ  
ԱՆՎԱՆՈՒՄ ԿԱՅՄԱՆ ԿԱՌԱՅՈՒՄ

ՆԱԿԱԳՈՐԻ-Կ ՕՐԻ

Աշխատանքային ամսացից

ԳՏԱԿԻ ԿԱՅՄԸ

ԱՄՍՄ

ՕՒՆ

ՄԱՍԿԱՆՈՑ

Է. 100

ՔՐՈՒՐԻ

Կ. ԿԱՌԱՅՈՒՄ

ՆԱԿԱԳՈՐԻ

Ա. ԿԱՌԱՅՈՒՄ

ՆԱԿԱԳՈՐԻ

Կ. ԿԱՌԱՅՈՒՄ

ԱՄՍՄ

ՔՐՈՒՐԻ

Ս

ՕՒՆ

Տ

«ՊՐՈՖԵՆԵՐՅԻ» ՍՊԸ



### 1.5.3 Հողային աշխատանքներ. Կադրային ապահովում և շինտեխնիկա

Ավտոմեքենաների հեղուկ գազի, հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի նախագիծը նախատեսված է ՀՀ Կոտայքի մարզ Պտղնի բնակավայրի 23-րդ փողոց 8 հողամաս հասցեում:

Հողային աշխատանքների ծավալ՝ հանույթ, 2000խմ հետլիցք՝ 1200 խմ:

Ավալցուկ հողային զանգվածը կտեղափոխվի Աբովյան համայնքի հետ համաձայնեցված վայր:

ԻՏԱ և բանվոր անձնակազմ, մարդ շինարարության փուլ՝

- Ինժեներատեխնիկական անձնակազմ - 2 մարդ
- Արհեստագործներ և բանվորներ - 10 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ - 5 մարդ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

### 1.5.4 Ինժեներական ցանցեր

Լցակայանի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի միանալով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ ցանցին, որի համար սահմանված կարգով ստացվել է տեխնիկական պայման և լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Ջրամատակարարումը նախատեսվում է Երևան-Սևան մայրուղու հարեվանությամբ անցնող D = 800մմ տրամագծի ջրատարից: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ կենցաղային պայմանները կապահովեն տեղադրելով բիոզուգարաններ, խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շահագործման փուլում կայանում առաջացող կենցաղային կեղտաջրերը սանիտարական-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Բակային ցանցի միջոցով ուղղվում են կեղտաջրերի անջրթափանց հոր: Հորի ծավալը կազմում է 45 խմ: Կապված լցվելու հաճախականությունից սեփտիկ հորից կենցաղային կեղտաջրերը հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:



**2. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Վերին Պողոնի բնակավայրը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում: Սահմանակից է մարզի 3 գյուղերի վարչական տարածքներին և Երևան քաղաքին: Վերին Պողոնիով էանցնում Երևան-Իջևան Մ-4 միջպետական ավտոճանապարհը: Բնակչությունը՝ 970 մարդ, զբաղվում է պտղաբուծությամբ, բուսաբուծությամբ: Տարածքը գտնվում է M4 միջպետական ճանապարհին կից: Տարածքի կառուցապատված չէ, ունի փոքր թեքություն:

**2.2 ՌԵԼԵՖ**

Տեղանքի ռելիեֆը ունի հիմնականում միջին կտրտվածություն: Զգալի տարածքներ են զբաղեցնում հարթությունները: Ժամանակակից ռելիեֆի ձևավորման գործում կարևոր մասնակցություն են ունեցել վերին երրորդական և չորրորդական ժամանակահատվածի անդեզիտաբազալտները, տուֆային լավաները: Մայր ապարները ներկայացված են խճա-բեկորային էյուվիալ և էյուվիալ- դեյուվիալ կարբոնատային ավազակավերը: Այս նստվածքների հզորությունը, կախված ռելիեֆի ձևից, հիմնականում չի գերազանցում 0.5-1.5 մ-ից:

**2.3 ԿԼԻՄԱ**

Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների, օգտվելով 11-7.01-2011>> «Շինարարական ՀՀՇՆ կլիմայաբանություն ձեռնարկից:

Օդի միջին ջերմաստիճանը, օC

Աղյուսակ 2.1.

Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6

Օդի հարաբերական խոնավության բնութագիրը ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.2-ում:

Օդի հարաբերական խոնավությունը, %

Աղյուսակ 2.2.

Միջինը ըստ ամիսների, %												միջին տարեկան
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
73	69	63	60	60	54	50	48	49	59	70	74	61

Տեղումների բնութագիրը ըստ Եղվարդ օդերևութաբանական կայանի տվյալների բերված է աղյուսակ 2.3-ում:

Տեղումների բնութագիրը

Աղյուսակ 2.3.

Տեղումների քանակը _____ միջին _____, մմ մարսիմալ օրական												տարեկա ն
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	<b>436</b>
30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	<b>53</b>

Քամու ակտիվությունը ռեգիոնում ըստ Եղվարդ մետեոկայանի տվյալների բերված է աղյուսակ 2.4-ում:

Քամու բնութագիրը

Աղյուսակ 2.4.

ամիս	քամու կրկնվողությունն ըստ ուղղությունների և անոտրրի, % քամու միջին արագությունը, մ/վրկ								Անոտրր
	Հս	ՀսԱր լ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	
I	6	48	11	3	15	6	9	2	78
	1,7	1,8	1,7	1,5	1,7	1,9	1,8	1,7	
IV	5	48	7	3	17	10	8	2	50
	3,0	3,8	2,7	2,4	2,4	2,8	2,7	2,1	
VII	6	73	4	1	7	4	4	1	40
	4,9	5,5	4,9	1,7	3,0	2,5	3,0	1,8	
X	5	55	6	3	16	8	6	1	70
	2,7	3,1	2,1	1,9	1,9	2,3	1,8	2,2	

## 2.4 ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆ

Օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՍՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Պտղնի բնակավայրում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՕ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎՕ վիճակագրական տեղեկագրի՝ Պտղնի բնակավայրի բնակչության թվաքանակը կազմել է 1506 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ. 3), Պտղնի համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. Փոշու մասնիկներ՝ 0,2մգ/մ<sup>3</sup>, ածխածնի մոնօքսիդ՝ 0,4 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդ՝ 0,008 մգ/մ<sup>3</sup> և ծծմբի երկօքսիդ՝ 0,02 մգ/մ<sup>3</sup>:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹԿ-ն (ՍԹԿ<sub>փոշի</sub> = 0,15 մգ/մ<sup>3</sup>):

**Աղ. 3** Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ <sup>3</sup> )			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

## 2.5 ՀՈՂԵՐ

Լեռնային շագանակագույն հողերը մանրագնին կերպով ուսումնասիրվել են Էդիլյանի և Խտրյանի, Սարգիսյանի, Մելքոնյանի, Փարսադանյանի, Մանուկյանի (Թ.Ն. Կաթիսյան, 1963; Ն.Ն. Նաժմեդյան 1959, Է.Յ. Իսահանյան, 1968; Է.Թ. Իսահանյան 1970; Ա.Է. Իսահանյան, 1970) կողմից, որոնք լեռնաշագանակագույն հողերի սահմաններում անջատել են երկու ենթատիպ՝ բաց և մուգ շագանակագույն հողեր:

Մուգ շագանակագույն հողերը մակերեսից ունենում են մուգ, երբեմն գորշավուն երանգավորում: Կուլտուրականացված շագանակագույն հողերը ձևավորվում են նախալեռնային հարթությունների վրա, տարբերվում են համեմատաբար հզոր հունուսային հորիզոնով (50-70սմ) թույլ դիֆերենցված համասեռ պրոֆիլի կառուցվածքով: Հին ոռոգելի հողատեսքերը հիմնականում լվացված են և առանձնանում են որոշակի խտացվածությամբ: Այս հողերը բնութագրվում են խայտաբղետ մեխանիկական կազմով, որը պայմանավորված է ռելիեֆի լիտոլոգիական

պայմաններով, ինչպես նաև ներհողային հողմնահարման և ոռոգման ազդեցություններով: Հողերի ձևավորման համար հիմք են հանդիսացել կարծր ապարների հողմնահարման նյութերը, որոնք առանձնանում են ապարների բեկորային բարձր պարունակությամբ:

Ավազախճային նստվածքների վրա զարգանում են առավել թեթև մեխանիկական կազմ ունեցող հողեր, որոնց պրոֆիլում միներալային մասը զգալի տատանումներ է ունենում: Լեռնաշագանակագույն կուսական հողերը բնութագրվում են բարձր քարքարոտությամբ և կմախքայնությամբ: Քարքարոտությունը ըստ խորության աճում է: Մշակովի հողերը հաճախ բնութագրվում են քիչ քարքարոտությամբ և ավելի ծանր մեխանիկական կազմով: Նկատվում է վերին հորիզոններում նուրբ տղմային ֆրակցիայի կուտակումներ, որը պղտոր ջրերով ոռոգման արդյունք է: Այս հողերի տղմային ֆրակցիայում հիմնականում գերակշռում են մոնթորիլոնիտային, փքվող քլորիտային միներալները: Հողերի երոզացվածության աստիճանը՝ 10 – 15 %:

## 2.6 ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը /ծածակագիրը՝ 9120040001004/՝ 1.05 տ, որը կհավաքվի աղբահավաք կոնտեյներներում և կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 20 խմ շինարարական աղբը /ծածակագիրը՝ 9120060101004/, ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից շինթույլտվությամբ հատկացված վայր:

## 2.7 ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

Չոր տափաստանային գոտու կլիմայական պայմաններում 1320-1390 մ բարձրության սահմաններում տարածված են փետրա-խոտա-շյուղախոտերը, բոխի-կծմախոտային տիպերը: Հանդիպում է նաև կիսաանապատային բուսականությունը, օշինդրա-էֆեմերային մասնակցությամբ՝ *Artemisia Fragrans Willd*, *Kochia Prostrata (L.) Schrad.*, *Atraphaxis Spinosa L.*, և այլն:

### Կենդանական աշխարհը

Տարածաշրջանում հանդիպում են կենդանական աշխարհի հետևյալ ներկայացուցիչները՝ գորշուկ, նապաստակ, ճահճակուղբ, ժայռային մողես, լորտու սովորական, դաշտամուկ, քարակզաքիս և այլն: Անողնաշարավորներից հանդիպում են՝ անձրևավորող, մրջյունը, ծղրիղը, ճռիկը, մորեխը և այլն:

Թռչուններից հանդիպում են ճնճուկը տնային, մոխրագույն ագռավը, անտառային արտույտը (*Lullula arborea*), գյուղական ծիծեռնակը (*Hirundo rustica*), եղինջաթռչնակը (*Troglodytes troglodytes*), ժայռային ծիծեռնակը (*Ptyonoprogne rupestris*):


Օձերից հանդիպում են գյուրգան և արևնտյան վիշապիկը (*Eryx jaculus*):

## 2.8 ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

### ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԱՅԻՆ ՋՐԵՐ

Կոտայքի մարզը գերազանցապես տեղակայված է Սևան-Հրազդան ջրային ավազանում, որը ներառում է Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերը: Կոտայքի մարզի շատ փոքր մաս գտնվում է Արարատի ջրային ավազանում:

### Քարտեզ 0-1 Սևան-Հրազդան ջրային ավազանի Քարտեզ



### Հրազդան ԳԵՏԸ

Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից և ձգվում է մինչև Սևան քաղաք: Գետի ավազանն իր վերին հոսքի սահմաններում սահմանակից է Փամբակ լեռնաշղթային

հյուսիսում, Ծաղկունյաց լեռնաշղթային արևմուտքում և Գեղամա լեռնաշղթայն արևելքում: Ընդհանուր առմամբ, գետը հոսում է նեղ կիրճով: Երևանն անցնելուց հետո գետը հոսում է Արարատյան դաշտավայրով և թափվում Արաքս գետ: Գետի երկարությունը 141 կմ է, իսկ թեքությունը՝ 1,000 մ: Ջրհավաք ավազանի տարածքը (առանց Սևանա Սևանա լճի) է 2,560 կմ<sup>2</sup>:

Հիդրոէկրաբանական տեսանկյունից գետի ջրհավաք ավազանը բաժանվում է երկու զգալիորեն տարբեր մասերի. աջ ափին տիրում են հիդրոֆոբիկ շերտերը, մինչդեռ ի տարբերություն դրա, ձախ ափը կազմված է ճաքած ոչ ջրակայուն ապարներից: Ահա թե ինչու, գետի վտակները գլխավորապես աջ ափում են (Մարմարիկ, Դալար, Արայ):


Գետը հիմնականում լցվում է ձախ ափին գտնվող աղբյուրներից (Ակունք, Արգելթ, Արգնի, և այլն), որոնք իրենց հերթին սնվում են Գեղամա լեռնաշղթայից: Մարմարիկ գետը 37 կմ երկարության է, իսկ ջրհավաք ավազանը 427 կմ<sup>2</sup> է: Գետը սկիզբ է առնում Փամբակ և Ծաղկունյաց լեռնաշղթայից բխող աղբյուրներից և թափվում է Հրազդան գետ գետաբերանից 116 կմ հեռավորության վրա:

Հաշվի առնելով այն, որ Հրազդան գետն իր սկզիզբն է առնում Սևանա լճից, ունի էական թեքություն, հոսում է Արարատի դաշտավայրով և կենտրոնական շրջաններով, ինչպես նաև մայրաքաղաքի միջով, համարվում է երկրի ամենամեծ գետը: Գետն օգտագործվում է ջրամատակարարման, էներգիայի, հանգստի, ձկնաբուծության և այլ նպատակներով:

*Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք*

Հրազդանի ՋԿՏ-ը ներառում է Հրազդանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը:


2020 թվականին Հրազդանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 25%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2020 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Շաղվարդ գետի՝ Փարպիից ներքև դիտակետի, որտեղ ջրի որակը 3-րդ դասից դարձել է 4-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարոտը, Հրազդանը, Գետառը և Ծաղկաձորը:



Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 21 դիտակետում, որից 8-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2019 թվականին այս ՋԿՏ-ից ջրառը կազմել է 1289.2 մլն մ<sup>3</sup>, որից 43.4%-ը բաժին է ընկնում մակերևութային, 56.6%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբու-ծության (79.3%) և ոռոգման (10.0%) նպատակներով:

**Հրագրանի ՋԿՏ թափվող վնասակար նյութեր, 2019թ.**



Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Յոթ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան ելքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացվում են.



Աղյուսակ 13. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան էլքեր, մ <sup>3</sup> /վ		
		փաստացի	նորմ	%
Հրազդան	Հրազդան	5.91	7.77	76
Հրազդան	Արգել	3.19	4.21	76
Հրազդան	Երևան	5.36	6.81	79
Մարմարիկ	Հանքավան	1.90	1.68	113
Մարմարիկ	Աղավնաձոր	3.98	4.79	83
Քասախ	Վարդենիս	0.75	1.21	62
Քասախ	Աշտարակ	3.65	3.43	106

Օգտագործվել են Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) 2020 թվականի տեղեկագրում ներկայացված տվյալները:

### 2.9 Պատմամշակութային հուշարձաններ

Կոտայքի մարզի Պտղնի գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 14 հուշարձան (8 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
Ամրոց	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 1.5-2 կմ հվ-աե, եռանկյունաձև հրվանդանի վրա	<a href="#">6.54/1</a>	Հ	
Բնակատեղի	Ք.ա. 2-1 հազ.	ամրոցից աե և հս-աե	<a href="#">6.54/1.1</a>	Հ	
Ամրոց «Պտենիս»	Ք.ա. 2 հազ. միջնադար		<a href="#">6.54/2</a>	Հ	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.		<a href="#">6.54/2.1</a>	Հ	
Գերեզմանոց	12-20 դդ.	գյուղի աե	<a href="#">6.54/3</a>	Հ	



հուշարձան	կառուցված	վայր, հասցե	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ
		ծայրին			
Խաչքար	11 դ.		<a href="#">6.54/3.1</a>	Հ	
Գյուղատեղի	16-18 դդ.	գյուղի հվ ծայրին	<a href="#">6.54/4</a>	S	
<a href="#">Եկեղեցի Պտղավանք, Պտղնիի տաճար</a>	6-7 դդ.	գյուղի մեջ	<a href="#">6.54/5</a>	Հ	
Գերեզմանոց	13-17 դդ.	գյուղի մեջ	<a href="#">6.54/5.1</a>	Հ	
Խաչքար	13-15 դդ.	գերեզմանոցից 50 մ ամ	<a href="#">6.54/5.1.1</a>	S	բեկորներ
Խաչքար	15-16 դդ.	գերեզմանոցից մոտ	<a href="#">6.54/5.1.2</a>	S	
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1976 թ.	գյուղի մեջ	<a href="#">6.54/6</a>	S	
Մատուռ	19 դ.	գյուղից հվ, ձորի մեջ, ճանապարհի ոլորանի աջ եզրին	<a href="#">6.54/7</a>	S	վերակառ. 20 դ.
Մատուռ Թուխ Մանուկ	17 դ.	գյուղի հվ ծայրին	<a href="#">6.54/8</a>	Հ	

Համաձայն ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին 14 օգոստոսի 2008 թվականի N 967-Ն որոշման, Պտղնի բնակավայրի տարածքում բնության հուշարձանները բացակայում են:

### 3 ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

#### 3.9 Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում և լցակայանը չի կառուցվում: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված լրացուցիչ ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնածին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Տարածաշրջանի տրանսպորտային միջոցների համալիր սպասարկման որակի բարելավում:
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորություններ չեն լինի:

#### 3.10 Քննարկվող տարբերակներ

Դիտարկվել են ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Կառուցվում և շահագործվում է միայն հեղուկ գազի լցակայան:

Այս տարբերակի առավելություններն են.

- շինարարական աշխատանքների ծավալները և համապատասխանաբար կապիտալ ներդրումների ծավալները կլինեն ավելի փոքր,
- սպասարկող անձնակազմը կլինի ավելի փոքրաքանակ և ընթացիկ ծախսերը նույնպես կլինեն ավելի քիչ

Տարբերակի բացասական կողմերն են.

- ավելի ցածր շահութաբերություն
- վառելիքի մատակարարման սահմանափակ ծավալներ:

Բ. Կառուցվում և շահագործվում է համալիր՝ հեղուկ գազի, դիզելային վառելիքի և բենզինի լցակայան:

Այս տարբերակի առավելություններն են.

- ավելի բարձր շահութաբերություն
- տեսակարար ծախսերի ավելի ցածր մակարդակ:

Տարբերակի բացասական կողմերն են.

- կապիտալ ծախսերի ավելի բարձր մակարդակ
- շինարարական աշխատանքների ավելի երկար տևողություն:

Վերլուծելով ներկայացված տարբերակները ընտրվել է երկրորդ տարբերակը հետևյալ հիմնավորումներով.

- բնապահպանական ազդեցությունը գործնականում նույնն է, քանի որ շինարարական աշխատանքների ժամանակ հողային աշխատանքների ծավալները նույնն են, իսկ արտանետումների տարբերությունը կկազմի մոտավորապես 10 տոկոս, քանի որ հիմնական վաճառվող վառելիքը հեղուկ գազն է, որի ծավալները 8.5 – 9 անգամ ավելի շատ են, քան բենզինի և դիզվառելիքի, համապատասխանաբար արտանետումները նույնքան ավելի շատ կլինեն:

- շահութաբերությունը ավելի բարձր է:

#### 4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Ներկայացվող գործունեության ազդեցությունը կարելի է բաժանել երկու պայմանական մասի.

- ազդեցություն՝ շինարարական աշխատանքների ընթացքում,
- ազդեցություն՝ արտադրամասի շահագործման ընթացքում :

#### 4.9 Շինարարական աշխատանքներ

Շինարարության փուլում ազդեցությունը պայմանավորված է փոշու արտանետումներով, աղմուկի մակարդակի բարձրացմամբ, շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

##### 4.9.1 Օդի աղտոտում

Շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխազագեթի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզելառեկիբի այրման արդյունքում:

##### Հողային աշխատանքներ

Հիմքերի փորման, հողի բեռնման և տեղափոխման ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել նույն՝ ստորև բերված բանաձևով:

$$Q = K1 \times K2 \times K3 \times K4 \times K5 \times K7 \times B \times G \times 10^6 / 3600 \text{ (գ/վ), որտեղ՝}$$

K1 -ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 -ը փոշու մասնաբաժինն է, որը կարող է վերածվել աերոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.0

K4 -ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի խոնավությունը, 0.6 /հաշվի առնելով ջրցանը/

K6 -ը գործակից է, որը հաշվի է առնում գրունտի չափերը, 0.4

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G -ն՝ հողային զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Շինարարության ընդհանուր տևողությունը կկազմի 7 ամիս, հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է 1 ամիս կամ

1 ամիս x 30 օր x 8 ժամ = 240 ժամ/շինարարություն:

Փորվող, հանվող հողի/գրունտի ընդհանուր զանգվածը կազմում է  $G = 2000 \text{ մ}^3$  ամբողջ ընթացքում, մեկ ժամում՝

$$2000 \text{ մ}^3 : 240 = 8.3 \text{ մ}^3/\text{ժամ կամ, հաշվի առնելով տեսակարար կշիռը՝}$$

$$8.3 \text{ մ}^3/\text{ժամ} \times 1.6 \text{ տ}/\text{մ}^3 = 13.3 \text{ տ}/\text{ժամ}:$$

$$Q = 0.05 \times 0.02 \times 1.0 \times 1.0 \times 0.6 \times 0.4 \times 0.6 \times 13.3 \times 10^6 / 3600 = 0.53 \text{ գ}/\text{վրկ}$$

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմեն՝  $0.53 \text{ գ}/\text{վ} \times 240 \text{ ժ}/2 \times 3600 \text{ վ}/10^6 = 0.46 \text{ տ}/2\text{ին}$ . Ժամանակահատված:

Շինարարության ընթացքում վերը նշված արտանետումները կլինեն տեղայնացված՝ ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականացվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, գրունտի խոնավացում, տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափփի ծածկման պայմաններում:

#### **4.9.2 Աղմուկի և թրթռումների ազդեցություն**

Աշխատատեղերում աղմուկի մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին:

Աղմուկի ազդեցությունը պայմանավորված կլինի շինարարության փուլում շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ:

Օգտագործվող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները ընտրվելու են այն նախապայմանով, որ դրանց տեխնիկական ցուցանիշներում աղմուկի մակարդակը կառավարման խցում չգերազանցի 80 դԲա: Այս ցուցանիշը թույլ կտա ապահովել աշխատանքային տեղամասերի սանիտարական նորմերը, իսկ հաշվի առնելով հեռավորությունը բնակելի թաղամասերից, ազդեցությունը բնակավայրերում գործնականում չի զգացվի:

#### **4.9.3 Ջրօգտագործում և ջրահեռացում**

Շինարարության ընթացքում ջուրն օգտագործվելու է աշխատանքային հրապարակների ջրցանի, փորվող հանվող հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել մերձակա հասցեում անցնող Վեոլիա ջուր ընկերության ջրատարից, ընդ որում միացումը կիրականացվի առաջնահերթ, ապահովելու համար շինարարական աշխատանքների անխափան ընթացքը:

*ա. Ջրցան*

Հողային աշխատանքները նախատեսված են տարվա տաք եղանակին, համապատասխանաբար, անհրաժեշտ կլիմի իրականացնել աշխատանքային հրապարակների ջրցան: Շինարարական հրապարակի մակերեսը նախատեսված է 2000 մ<sup>2</sup>:

**Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝**

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

$S_1$  – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ<sup>2</sup>,

$K_1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.0015 մ<sup>3</sup>,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 210

$$U_1 = 500 \times 0.0015 \times 210 = 157.5 \text{ խմ. շին. ժամ.}$$

Հողային աշխատանքների տևողությունը կազմում է 1 ամիս, սակայն ջրցանը կիրականացվի շինարարական աշխատանքների ամբողջ ընթացքում՝ տաք, առանց տեղումներով օրերին՝ 210 օր:

*բ. Գրունտի խոնավացում*

Փորման աշխատանքների արդյունքում հանվում է ընդհանուր 2000 մ<sup>3</sup> հողաշերտ և գրունտ: Այդ ընթացքում փոշու արտանետումները կրճատելու նպատակով իրականացվում է հողի և գրունտի խոնավացում:

Խոնավացման համար անհրաժեշտ ջրաքանակը կկազմի.

$$2000 \text{ մ}^3 \times 8 \text{ լ/մ}^3 = 16000 \text{ լ կամ } 16.0 \text{ մ}^3:$$

$$\text{Միջին օրական՝ } 16 : 20 \text{ օր/ամիս (չոր եղանակ) : } 1 \text{ ամիս} = 0.8 \text{ մ}^3/\text{օր}:$$

*գ. Խմելու-կենցաղային ջուր*

ա. Խմելու ջրապահանջ

**Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝**

$$W_{\text{խ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ՝}$$

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 2 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 15 մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է՝ 210 օր

$$W_{\text{խ.տ.}} = (2 \times 0.016 + 15 \times 0.025) \times 210 = 85.47 \text{ մ}^3/\text{շին. ժամ.}$$

*դ. Ջրահեռացում*

Տարածքների ջրցանի և հողերի խոնավացման ջրօգտագործման արդյունքում արտահոսք չի առաջանում:

*ա. Տնտեսական կենցաղային կեղտաջրեր*

$$W_{\text{կենց.կոյուղի}} = W_{\text{կենցաղ. x}} (1 - \Psi), \text{ որտեղ } \Psi$$

$\Psi$ ՝ կորուստները, ընդհանրացված 5 տոկոս /0.05/,

$$W_{\text{կենց.կոյուղի}} = 85.47 \text{ մ}^3 \times (1 - 0.05) = 81.19 \text{ մ}^3$$

Շինարարության փուլում շինհրապարակում կտեղադրվեն բիոգուգարաններ:

**4.9.4 Ազդեցությունը հողածածկի վրա**

Շինարարական աշխատանքների ժամանակ հողածածկի աղտոտում չի սպասվում:

Ինչպես նշվել է 2-րդ գլխում, տեղանքում բերրի հողաշերտ գործնականում չկա, համապատասխանաբար վնաս նույնպես չի լինի:

**4.9.5 Ազդեցությունը կենդանական և բուսական աշխարհի վրա**

Տարածքը նախկինում ամբողջության յուրացված էր և այստեղ չկան բնական բուսածածկ կամ վայրի կենդանիների ապրելավայրեր: Համապատասխանաբար ազդեցություն կենսաբազմազանության վրա նույնպես չի լինի:

**4.9.6 Շինադր**

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է՝ 20 խմ: Շինարարական աղբը ամբողջությամբ կտեղափոխվի համայնքի հետ պայմանագրային հիմունքներով հատկացված վայր:

**4.9.7 Սոցիալական ազդեցությունը**

Սոցիալական ազդեցության գործոններն են՝ շինարարական աշխատանքները, նոր աշխատատեղերի ստեղծումը, հողօգտագործում և հողի ձեռքբերում, ենթակառուցվածքների վրա հավելյալ լարվածություն, տեղական աշխատուժ, ժողովրդագրական խնդիրներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում այս բոլոր գործոնները չեն ունենա էական ազդեցություն, քանի որ շինարարական հրապարակը գտնվում է զգալի հեռավորության վրա բոլոր ընկալիչներից, առաջին հերթին բնակելի թաղամասերից: Միննույն ժամանակ այս ընթացքում կստեղծվեն աշխատատեղեր, ընդհանուր 17, որոնք թույլ կտան 17 ընտանիքներին բարելավել իրենց կենսամակարդակը:

#### 4.10 Շահագործման փուլ

##### 4.10.1 Օդի աղտոտում

Հեղուկ օրգանական վառելիքի ածխաջրածինների արտանետման աղբյուրներ են հանդիսանում նավթամթերքի ռեզերվուարները և վառելիքի լցման հանգույցները:

Լցակայանում կատարվելու է հեղուկ գազի, բենզինի և դիզելային վառելիքի լիցքավորում, որի ընթացքում կառաջանան ածխաջրածինների արտանետումներ:

Արտանետումների հաշվարկը կատարվել է ըստ ռուսական «РОСНЕФТЬ» ՓԲԸ մեթոդակարգի<sup>1</sup>:

Հաշվարկների մեթոդակարգը ընտրելու ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ավտոմեքենաների առավելագույն քանակը, որոնց վառելիքը կարող է միաժամանակ լիցքավորվել:

Օրգանական վառելիքի լցակայաններից ածխաջրածինների տարեկան արտանետումը որոշվում է համապատասխան նորմատիվների հիման վրա, որոնք հաշվի են առնում նավթամթերքների կորուստը պահեստավորման և լիցքավորման ժամանակ՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$G = (n_8 G_{\text{вн}} + n_9 G_{\text{ос}}) \times 10^{-3} \quad 1$$

որտեղ.  $n_8$  և  $n_9$  գործակիցները օրգանական վառելիքի լցակայաններում, նավթամթերքների բնական կորուստների նորմերն են ընդունման, պահեստավորման և լիցքավորման ժամանակ, համապատասխանաբար գարուն-ամառ և աշուն-ձմեռ ժամանակահատվածներում՝ կլիմայական գոտուն և ռեզերվուարի տեսակին համապատասխան՝ կգ / տ, (մեթոդակարգի աղյուսակ 6);

$G_{\text{ос}}, D_{\text{вн}}$  – մեկ տարվան համապատասխան ժամանակահատվածում օրգանական վառելիքի լցակայաններում վաճառված նավթամթերքի քանակը, տ.

Այս բանաձևը կիրառվում է ոչ շատ մեծ լցակայանների համար, որոնց շարքին են դասվում օրական մինչև 500 լիցքավորում կատարող լցակայանները: Ներկայացվող լցակայանում նախատեսվում է սպառել օրական.

հեղուկ գազ՝ 2500 – 3000 կգ,

բենզին՝ 300 – 400 լ,

դիզվառելիք՝ 100 լ:

Այս քանակների սպառման համար կպահանջվի 300 – 350 լիցքավորում (350 < 500)

Վերը բերված ծավալները գարուն-ամառ և աշուն-ձմեռ շրջաններում վաճառվում են հավասարաչափ:

<sup>1</sup> ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО «НК «РОСНЕФТЬ»  
МЕТОДИКА ПО НОРМИРОВАНИЮ И ОПРЕДЕЛЕНИЮ ВЫБРОСОВ ВРЕДНЫХ ВЕЩЕСТВ В АТМОСФЕРУ



Կորուստների գործակիցները ընդունվում են ըստ մեթոդակարգի 6 աղյուսակի, ելնելով կլիմայական գոտուց: Ներկայացվող հաշվարկների համար ընտրվել են գործակիցներ, որոնք համապատասխանում են ՌԴ տաք կլիմայական գոտուն.

$$n_8 = 0.97 \text{ կգ /տ}$$

$$n^9 = 0.54 \text{ կգ /տ:}$$

Վաճառվող ծավալները, արտահայտված տոննաներով, կկազմեն.

- հեղուկ գազ = 3000 կգ /օր: 2 x 365 օր/տարի: 1000 կգ/տ = 547.5 տ/տարի
- բենզին = 400 լ/օր x 0.75 կգ /լ: 2 x 365 օր/տարի: 1000 կգ/տ = 54.8 տ/տարի
- դիզ. վառելիք = 100 լ/օր x 0.83 կգ/լ: 2 x 365 օր/տարի: 1000 կգ/տ = 15.15 տ/տարի, որտեղ 0.75 կգ /լ և 0.83 կգ/լ համապատասխանաբար բենզինի և դիզվառելիքի տեսակարար զանգվածն է:

$$G = [0.97 \times (547.5 + 54.8 + 15.15) + 0.54 \times (547.5 + 54.8 + 15.15)] \times 10^{-3} = 0.932 \text{ տ/տարի:}$$

Ըստ նախնական գնահատման առավելագույն արտադրողականության պայմաններում լցայունակների լիզբավորման գործընթացը կտևի օրական մետավորապես 12 ժամ, կամ տարեկան՝ 4360 ժամ: Այստեղից վարկյանում արտանետումը կկազմի՝

$$0.932 \text{տ/տարի} \times 10^6 \text{գ/տ} : 4360 \text{ ժամ/տարի} : 3600 \text{ վրկ/ժամ} = 0.06 \text{ գ/վրկ:}$$

#### Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Արտանետումների ազդեցությունը գնահատելու նպատակով կատարվել են մթնոլորտում դրանց ցրման արդյունքում սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկ և արդյունքները համեմատվել են սանիտարական նորմերի հետ:

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչի վրա, «Ռադուգա» ծրագրով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարածքը գտնվում է Արարատյան դաշտավայրում և 1 կմ շառավղով բարձրությունների տարբերությունը չի գերազանցում 50 մ, ռելիեֆի գործակիցը ընդունվել է 1:

Հաշվարկի համար անհրաժեշտ բնակլիմայական տվյալները բերված են օդերևութաբանական ծառայության նամակից /կցվում է/, ստրատիֆիկացիայի գործակիցը՝ ՕՀԸ86 մեթոդակարգից:

Քանի որ արտանետումները կատարվում են մի քանի կետերից, ըստ ՕՀԸ-86 մեթոդակարգի հաշվարկվել է տեղադրվել է էֆեկտիվ տրամագիծ:

Հաշվարկներով որոշվել են.

- հաշվարկային կետի կոորդինատները, մ;

- վնասակար արտանետումների գետնամերձ կոնցենտրացիաները ՍԹԿ մասով;
- ջահի առանցքի ուղղությունը;
- քամու արագությունը մ/վրկ-ով, որի դեպքում հաշվարկային կետում գետնամերձ կոնցենտրացիան հասնում է առավելագույն արժեքին:

Հաշվարկների արդյունքները բերված են Հավելված 1-ում:

Ըստ այդ հաշվարկների ադոտովածության առավելագույն մակարդակը գտնվում է թույլատրելի նորմերի սահմաններում /տես աղյուսակ 6.1./:

Աղյուսակ 6.1. Ցրման հաշվարկի արդյունքները

Արտանետվող նյութի անվանումը	Վտանգավորության դասը	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>		Հաշվարկված գետնամերձ կոնցենտրացիա	
		Առավելագույն միանվագ	Միջին օրական	Մգ/մ <sup>3</sup>	ՍԹԿ մասով
Սահմանային ածխաջրածիններ	4	1.0	-	0.03964	0.03964

Հաշվարկված գետնամերձ կոնցենտրացիայի ցուցանիշների համընկնումը պայմանավորված է սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի առավելագույն միանվագ 1.0 գործակցով:

*Ջրային ռեսուրսներ*

Լցակայանի շահագործման ժամանակ ջուրը օգտագործվելու է ճնշակի հովացման համակարգի լրացման, ասֆալտապատ հարթակի ջրցանի, ոռոգման և անձնակազմի խմելու կենցաղային կարիքների համար:

*Ճնշակի հովացման համակարգի ջրապահանջ*

Ճնշակի հովացման համակարգը փակ շրջանառու տեսակի է, որի ծավալը կազմում է 3.2 մ<sup>3</sup> և օրական պարբերականությամբ լրացվում է ջրի կորուստը, որը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$U_{\text{հովացում}} = V \times L \times T, \text{ որտեղ }`$$

V – շրջանառու համակարգի ծավալն է, 3.2 մ<sup>3</sup>

L – ջրի կորստի օրական նորմն է, 0.05

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 365 օր/տարի:

$$U_{\text{հովացում}} = 3.2 \times 0.05 \times 365 = 58.4 \text{ մ}^3/\text{տարի կամ } 0.16 \text{ մ}^3/\text{օր} :$$

*Ոռոգման ջրածախսը.*

$$U_{\text{որոգում}} = S_2 \times K_1 \times T, \text{ որտեղ }`$$

$S_2$  – կանաչ տարածքի մակերեսը, 1500 մ<sup>2</sup>,

$K_1$  – 1 մ<sup>2</sup> օրական ջրցանի նորմը, 0.003 մ<sup>3</sup>,

$T$  – ջրցանի ժամանակահատվածը օրերով /շոգ և չոր եղանակին/, 60

$$U_1 = 1500 \times 0.003 \times 60 = 270 \text{ մ}^3/\text{տարի}, \text{ կամ } 4.5 \text{ մ}^3/\text{օր}$$

*Անձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով`*

$$W_{\text{լ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

$n$  – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է` 1 մարդ

$N$ – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է` 0.016 մ<sup>3</sup>օր/մարդ

$n_1$ – սպասարկող աշխատողների թվաքանակն է` 3 մարդ

$N_1$  – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է` 0.025 մ<sup>3</sup>օր/մարդ

$T$  – աշխատանքային օրերի թիվն է` 365 օր/տարի:

$$W_{\text{լ.տ.}} = (1 \times 0.016 + 3 \times 0.025) \times 365 = 33.2 \text{ մ}^3/\text{տարի կամ } 0.091 \text{ մ}^3/\text{օր}:$$

Ոռոգումը իրականացվելու է ջրցան մեքենաների միջոցով` բերովի ջրով /մեկ ջրատար մեքենա օրական/:

#### *Ջրահեռացում*

Լցակայանում արտադրական հոսքաջրեր չեն առաջանում: Կայանում առաջանում են միայն կենցաղային կեղտաջրեր, որոնք սանիտարական սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու բակային ցանց: Բակային ցանցի միջոցով ուղղվում են կեղտաջրերի անջրթափանց հոր: Հորի ծավալը կազմում է 45 մ<sup>3</sup>: Կապված լցվելու հաճախականությունից սեպտիկ հորից կենցաղային կեղտաջրերը պայմանագրային հիմունքներով հատուկ մեքենաներով կհեռացվեն մոտակա կոյուղու ցանց:

#### **4.10.2 Այլ ազդեցություններ**

Լցակայանի շահագործման ընթացքում արտադրական թափոններ չեն առաջանում: Աղմուկի մակարդակը չի գերազանցի սանիտարական նորմերի պահանջները:

Շինարարության փուլում առաջացող կենցաղային թափոնները 1200կգ և շահագործման փուլում` 300կգ/տարի աղբահավաք ծառայության կողմից կտեղափոխվի աղբավայր:

#### 4.11 Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնաձին ազդեցության տեսակետից լցակայանի շրջանում այլ լցակայան կամ արտադրական ձեռնարկություն չկա և հետևաբար հավաքական ազդեցություն չի սպասվում:

## 5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = \text{ՀԱԳ} + \text{ՋԱԳ} + \text{ՕԱԳ},$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողածածկի և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕԱԳ-ն:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսությունների հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \sum_{q} \Phi_{q} \sum_{i} \varphi_{i} \cdot \Phi_{i}, \text{ որտեղ}$$

Ա -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

$\tau_q$  -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական հրապարակների համար ընդունվում է 4:

$\Phi_g$ -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$\Phi_g = 1000$  դրամ:

$\Psi_i$  -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, փոշու համար՝ 10, ածխաջրածինների՝ 3.16:

$\Phi_i$  -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

$\Phi_i$  գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 S_{U_i} - 2 U_{\theta} U_i), S_{U_i} > U_{\theta} U_i (2)$$

որտեղ՝

$U_{\theta} U_i$  -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

$S_{U_i}$  -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ ցրման հաշվարկով ցույց է տրվել, որ  $U_{\theta} U_i$  գերազանցումներ չկան՝  $\Phi_i = S_{U_i}$

$q = 1$ ՝ անշարժ աղբյուրների համար,

$q = 3$ ՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Քանի որ, սույն հաշվետվությունում դիտարկվել են առանձին շինարարության և շահագործման փուլերը, տնտեսական վնասը նույնպես հաշվարկվում է այդ փուլերի համար: Շինարարական աշխատանքների ժամանակ արտամետվում է փոշի՝ 2.76 տ ամբողջ շինարարության ընթացքում, իսկ շահագործման փուլում՝ 0.932 տ/տարի ածխաջրածիններ:

Շինարարական աշխատանքներ՝

$$U = \tau_q \Phi_g \sum \Psi_i \Phi_i = 4 \times 1000 \times 10 \times 0.46 = 18400 \text{ դրամ}$$

Շահագործման փուլ՝

$$U = 4 \times 1000 \times 3.16 \times 0.932 = 11780 \text{ դրամ/տարի:}$$

**6 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ՕՂԵՐՆՈՒՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ  
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ընթացքում հնարավոր են վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաների ավելացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագության նվազեցում, անհողմություն, մառախուղ) մասին հաղորդագրություն ստանալուց հետո կատարվում են հետևյալ գործողությունները (միջոցառումները),

- I կարգի վտանգի (զգուշացման) ժամանակ խստացվում է աշխատանքային գործընթացների ցուցանիշների և ռեժիմի վերահսկողությունը,
- II կարգի վտանգի ժամանակ դադարեցվում են աշխատանքները:

**7 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ  
ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շինարարական հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինարարական հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

**7.9 Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,

- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հաշվետվությունում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

### **7.10 Արտանետումների աղբյուրները**

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

### **7.11 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն**

#### **7.11.1 Մթնոլորտային օդ**

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշեգոյացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

#### **7.11.2 Ջրային ռեսուրսներ**

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.



- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25իսմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:

### 7.11.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական գործընացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ, ինչպես նաև ներգրավվի ժամանակակից տեխնիկական միջոցներ:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր:

#### 7.11.4 Բուսական աշխարհի պահպանության միջոցառումները

Անհետացման վտանգի տակ գտնվող, հազվագյուտ, պահպանության կարիք ունեցող բուսատեսակներին վնաս չի հասցվի, քանի որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ճանապարհին կից հատվածում, որը երկար տարիների ընթացքում արդեն իսկ ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների և որտեղ կենսաբազմազանությունը գրեթե բացակայում է :

Տարածքում հողի բերրի շերտը բացակայում է:

- Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի մաքրում աղբից, կեղտոտված բնահողից, վառելիքաքսուկային նյութերից: Շինարարական աղբը և մնացած թափոնները տեղափոխվելու են տեղական մարմինների կողմից հատկացված աղբավայրեր: Այդ նպատակով մինչև գործունեության սկսելը համայնքապետին կներկայացվի համապատասխան հայտ, կհամաձայնացվի աղբի և ավելացած գրունտի տեղափոխման վայրերը:
- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:

#### 7.11.5 Կենդանական աշխարհի պահպանության միջոցառումներ

Ամենամեծ ազդեցությունը կարտահայտվի հողային աշխատանքների ժամանակ դրանց բների ոչնչացմամբ: Սակայն կենդանիները այդ դեպքում առանց մեծ կորուստների կից տարածքներում կգտնեն նոր բների և բնակավայրերի լայն հնարավորություններ:

Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:

Ընդհանուր առմամբ, շինարարական աշխատանքները կկրեն լոկալ և ժամանակավոր բնույթ, ինչի շնորհիվ կենդանիներին հասցվող վնասը կլինի նվազագույն: Շինարարական աշխատանքների բնույթը և մասշտաբը այնպիսին են, որ նրանք իրենց փոքրածավալության պատճառով չեն կարող արգելել կենդանական աշխարհի ներկայացուցիչների սեզոնային միգրացիայի կամ ջուր խմելու ճանապարհները:

### 7.11.6 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում):
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկիչով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Շինարարական աշխատանքների ժամանակ՝

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

- գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
  - բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:
  - Նախատեսվող բնակելի համալիրում առկա վտանգավոր օբյեկտները «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով կներկայացվեն տեխնիկական անվտանգության փորձաքննությունների
  - իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում ղեկավարվել Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների և առողջապահական ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

#### 7.11.7 Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:

- պարբերաբար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:

### 8 Մշտադիտարկումների իրականացման պլան

Լիցքավորման կայանի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ;
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ;
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
5. Կենսաբազմազանության մշտադիտարկումներ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է 1320000 դրամ:

Մշտադիտարկում և բնապահպանական միջոցառումներ, շին. փուլ/ դրամ		
Տարածքի ջրցան փոշեգոյացումը կանխելու նպատակով	200000	200000
Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ;	21x45000	945000
Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:	7x25000	175000
Ամբողջ շինարարության համար		1320000

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախազգուշացումներ և աշխատողների անվտանգություն	<p>(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ</p> <p>(b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել</p> <p>(c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա:</p> <p>(d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)</p> <p>(e) Շինարարական աշխատանքները տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:</p>
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	<p>(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով</p> <p>(b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով</p> <p>(c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինարարական չի թույլատրվի:</p>
	Աղմուկ	<p>(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում</p> <p>(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականության սնվող սարքերը պետք է ծածկվեն:</p>
	Թափոնների կառավարում	<p>(a) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինարարական և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:</p> <p>(b) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից</p> <p>(c) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն</p> <p>(d) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել</p>



Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	<p>(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,</p> <p>(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն նախատեսված տարածքներում, որտեղից ջրի արտահոսք չի լինի:</p>
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	<p>(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով.</p> <ul style="list-style-type: none"> <li>▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ</li> <li>▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության զոնայում:</li> <li>▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին:</li> <li>▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար.</li> <li>▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում:</li> </ul>
Կենսաբազմազանության պահպանում	Շինարարական աշխատանքների հետևանքով կենդանական և բուսական աշխարհի վտանգներ	<ul style="list-style-type: none"> <li>▪ Շինարարության ընթացքում տարածքի բուսահողը հանվելու և կույտավորվելու է պաշտպանված վայրերում, հետագայում այն օգտագործվելու է տեղանքի բարեկարգման համար,</li> <li>▪ ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի ,</li> <li>▪ ջրային և հողմնային հողատարումից զերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն:</li> <li>▪ բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր:</li> <li>▪ շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով:</li> <li>▪ կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:</li> </ul>

		<ul style="list-style-type: none"><li>▪ Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով:</li><li>▪ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս:</li></ul>
--	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում</li> <li>- Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում</li> <li>- հերթականության ապահովմամբ</li> <li>- Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- Շինհրապարակ</li> <li>- Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ</li> </ul>	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> <li>- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում</li> <li>- Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում</li> </ul>	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների	Կապալառու

	վայր			ընթացքում	
Կենսաբազմազանություն	Բուսատեսակների, դրանց աճելավայրերի և պոպուլյացիաների վիճակի փոփոխության մշտադիտարկում	Գործունեության ենթակա տարածք	Արտաքին զննում, դաշտային հետազոտություններ	Շինարարության փուլում	Կապալառու
Իներտ շինանյութերի զննում	- Շինանյութերի զննում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույթաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Գետնամերձ կոնցենտրացիաների հաշվարկի արդյունքները

<<РАДУГА>>

2020.1.22

ИСХОДНЫЕ ДАННЫЕ

Управляющие параметры расчета и характеристики  
объекта

Объект: Автозаправка Айнтапа

Таблица 1

: Число источников	:	1	:
: Число рассматриваемых вредных веществ	:	1	:
: Географическая широта местности (град.)	:	40	:
: Температура	:	32.0	:
: Районный коэффициент	:	200	:
: Шаг перебора направления ветра	:	10	:
: Характеристика перебора направления ветра	:	дискретный	:
: Скорость ветра	:	22	:
: Число вкладов	:		:
: Число максимальных концентраций	:		:
: Угол	:	90	:
: Число групп суммирования	:	0	:
: Константа целесообразности проведения расчета	:	0.1	:



<<РАДУГА>>

2020.1.22

ПАРАМЕТРЫ ИСТОЧНИКОВ

Объект: Автозаправка В. Туманян

ТАБЛИЦА 7 СТАНИЦА 1

-----													
:		: ДИАМЕТР : ПАРАМЕТРЫ ГАЗОВОЗДУШНОЙ СМЕСИ :				К О О Р Д И Н А Т Ы				: УГОЛ МЕЖДУ :			
:		: КОД : ВЫСОТА : ТОЧЕЧНОГО : -----				: ТОЧЕЧНОГО, НАЧАЛО : КОНЕЦ ЛИНЕЙНОГО :				: ОСЬЮ ОХ И : УЧЕТ :			
:		: ИЛИ ПЛОС- :				: ИЛИ ПЛОСКОСТ. : ИЛИ ЛИНИИ ЦЕНТРА :				: НАПРАВЛЕНИЯ : РЕЛЬЕФА :			
:		: КОСТНОГО : СКОРОСТЬ : ОБЕМ :				: ТЕМПЕРАТУРА : ЛИНЕЙНОГО ИЛИ ЛИНИИ ЦЕНТРА :				: НА СЕВЕР :			
:		: :				: И ЦЕНТРА ПЛОСКОСТ. : ПЛОСКОСТНОГО :				: :			
-----													
:		: Н ИСТ. : Н (М) : Д :				: W (М/С) : V (М, КУБ/С) : Т (ГРАД.С) :				: X1 (М) : Y1 (М) : X2 (М) : Y2 (М) : С (ГРАД) : RH :			
-----													
:		1	3.0	0.12	3.0000	0.0339	20.0	30	20	-	-	90	1.00
-----													

<<РАДУГА>>

2020.1.22

НАРАКТЕРИСТИКА ВЫБРОСОВ

ОБЪЕКТ: Автозаправка В. Туманян

ТАБЛИЦА 8 СТРАНИЦА 1

-----  
: КОД ВЕЩ-ВА : НАИМЕНОВАНИЕ (ШИФР) ВЕЩ-ВА : ПДК (КГ/М, КУБ) : КОЕФ. ОСЕДАНИЯ : ЧИСЛО ИСТОЧНИКОВ :  
:-----

: 31 Углеводороды 1.000000 1.0 1 :  
:  
:-----

: Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) : Н ИСТ:МОЩ (Г/С) :  
:-----

1 0.0600  
-----



<<РАДУГА>>

2020.1.22

НАИБОЛЬШИЕ КОНЦЕНТРАЦИИ

(X, Y) - точка координаты

QH -нормированная концентрация в долях ПДК

HV -направление ветра в град.

U - скорость ветра м/с

Объект: Автозаправка В. Туманян

вещество:Углеводороды

Таблица 13 Страница 1

: QH	: X	: Y	: HV	: U	:Но.Источ:	вклад	:Но.Источ:	Вклад	:Но.Источ:	Вклад	:Но.Источ :	Вклад :
: 0.039643	200	0	0	5.0	1	0.03964						
: 0.027324	400	0	0	7.0	1	0.02732						
: 0.018321	600	0	0	22.0	1	0.01832						
: 0.014176	800	0	0	22.0	1	0.01418						
: 0.012247	800	200	10	22.0	1	0.01225						

Минимальная и максимальная концентрации в точках расчетов: 0.0000000000 0.0396425322

<<ՐԱԴՍԴԳ>>

2020.1.22

Анализ исходных данных по выбросам

Объект: Автозаправка В. Туманян

Таблица 14 Страница 1

КОД	НАИМЕНОВАНИЕ (ШИФР)	Требуемое	Производство ТПВ (тре-	В расчет включить +/- нет-			
ВЕШ-В:	ВЕЩЕСТВА	потребление: Мощность	буемое потребление	Класс			
:	:	воздуха	выброса	по отношению			
:	:	(м.куб/с)	М(г/с)	концентрации/массе выбросов:			
:	:	:	разбавления) (м.куб/с)	пред- :приятия:			
31	Углеводороды	60	0.1	4.0809E+0003	5	-	-

<<ՐԱԴՍԴԳ>>

2020.1.22

Анализ исходных данных по источникам

Объект: Автозаправка В. Туманян

Вещество: Углеводороды

Таблица 15 Страница 1

Код	Источники	Мощность	Концентрация на высоте	Объем	Радиус	Требуемое	Параметр	Степень	Класс	Рекомендуется		
источника	высота	дыаметр	выброса	Скорость	газовоз	зоны	потребление	разбав	воздеист.	исто-источник в		
ника	устья		ходе	выброса	смеси	влияния	воздуха	ления	на природ	чника:расчеты		
NN	Н(м)	Д(м)	M1(г/с)	C(мг/м.куб)	Um(m/s)	Xm(M)	RR(M)	ТПВ(м.куб/с)	R	П	Включить +	
											Невключить -	
1	3.00	0.12	0.060	1768.39	3.00	0.03	198.2	6.00E+0001	6.8E+0001	4.1E+0003	4	+



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղի համայնք  
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Պտղի, 1-ին փող, 6  
(0222) 57070, ptghn.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 114

ՎԱՐԴԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ  
ԱՌԱՋԱԳՐԱՆՔ ՏԱՆՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացի Վարդան Ռուբենի Թումանյանի դիմումը՝ որոշում եմ:

1. Վարդան Ռուբենի Թումանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղի 23-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող 07-054-0332-0007 կադաստրային ծածկագրով հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք (նախագծման թույլտվություն)՝ հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:
2. Նախագծային փաստաթղթերը մշակել համապատասխան մարմինների կողմից համաձայնությունները ստանալուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ




ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱՅԱՆ

2020 թ. հոկտեմբերի 05  
գ. Պտղի



ՁՆ Ն Լ 2



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԿՈՏԱՅԻՐ ՄԱՐԶ ԴՏՆԵ ՀԱՄԱԵԼՔ**  
(Մարզի կառավարություն)  
**ՆԱԽԱԳՇՈՒՄԱՆ ԹՈՒՅՆՎՈՒԹՅՈՒՆ**  
**(ԿԱՆՏԱՆԱԴԵՑԱԿԱՆ ՎԱԿՈՎԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԴԱԼՔ)**

N 40 « 05 » 10 2020թ.

Օրըկեր \_\_\_\_\_ Ջեյրախ վանկերի վերականգնման կարանի կառուցում  
(օրըկերի սահմանում կառուցվող վերականգնման շինարարական օբյեկտներում վերականգնման կարանի կառուցումը կառուցողական կարանի կառուցումը)  
Ջեյրախ վանկերի վերականգնման կարանի կառուցում IV-րդ կտրվածքում ըստ ԹԻԿ  
(ժամկետ ընդգրկումը, հարցաթուղթը)  
Ճարտարապետական շինարարական կախազնային փաստաթղթերի մշակման համար:  
(ժամկետային սահմանում կառուցման փուլերը և օջև)  
**Փակվելու վայրը՝ Կոտայքի մարզ Գ.Մուշեղի 23-րդ փողոց թիվ 8 համկազմը 07-354-0332-0007 0.5 հա**  
(ժամկետային սահմանում կառուցման փուլերը, շինարարական կառուցման համար)  
**Կառուցապատող՝ Վարդան Ռուբենի Քոստանյան և Երևան Վեմբերյան փ. 17ա շ թև 22**  
(Վարդանյանի անվանումը, Կոտայքի մարզ, Վեմբերյան անվանումը, Կոտայքի մարզի կառուցապատողի հասցեն)  
**Արտադրողների տրամադրման հիմքը հարցը՝ սեղանի գործի կառուցման կառուցման օգտակար**  
(Վարդանյանի անվանումը, Կոտայքի մարզ, Վեմբերյան անվանումը, Կոտայքի մարզի կառուցապատողի հասցեն)  
**Վարդանյանի անվանումը, Կոտայքի մարզ, Վեմբերյան անվանումը, Կոտայքի մարզի կառուցապատողի հասցեն**  
(Վարդանյանի անվանումը, Կոտայքի մարզ, Վեմբերյան անվանումը, Կոտայքի մարզի կառուցապատողի հասցեն)  
**Արտադրողների գործողության ժամկետը՝ մինչև մեկ տարի**  
(N 1 հաղթելու էջ-ը կտրվածքի համարային քարտեզում)

**ՆԱԽԱԳՇՈՂ ՀՈՐԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

*(տարողանկերով) (\*) և չփած դրույթների գրաֆիկական արտադրումը տրամադրվում է կնք ներկայացվող անվտոմի պեխնայով՝ Մ 1/500)*

1. Հողամասը գտնվում է \_\_\_\_\_ Ջեյրախ վանկերի կառուցման  
(ժողովարանի վերջ թուղթային քարտեզային օբյեկտներում, որտեղ կառուցվել է կառուցողական կարանի կառուցումը)
2. (\*) Հողամասի չափերը \_\_\_\_\_ 0.5 հա  
(ժողովարանի անվանումը, կառուցողական կարանի կառուցումը, ժամկետը (հա))
3. Հողամասի սակավիճակը \_\_\_\_\_ կառուցապատված  
(տեղեկի թուղթային շինարարական օբյեկտի կառուցումը) արտադրողի կողմից կառուցվել է կառուցողական կարանի կառուցումը, ժամկետային կառուցումը և օջև)
4. (\*) Տրամադրության պայմանները \_\_\_\_\_ կառուցողական և մեկ օգտակար ժամկետային  
(ժամկետային սահմանում կառուցվող կառուցողական օբյեկտների տրամադրման ժամկետային և օջև)
5. (\*) Ինժեներական լուծումներ և սարքավորումներ կառուցողական կարանի կառուցման համար, որտեղ չի մտնում կառուցումը, էլեկտրամատակարարման, էլեկտրաէներգիայի մատակարարման հարցաթուղթային համակարգերը) \_\_\_\_\_  
(ժամկետային կառուցումում կամ կնք տարածքով անցվող ինժեներական)

կերպարագրերն են, այդ թվում՝ ստորգրված(ա)

6. (\*) Կից հոդվածներ \_\_\_\_\_ բնակավայրերի կառուցումը \_\_\_\_\_  
(Այս կատեգորիաների սահմանում է գրանցված սահմանները՝ համապատասխան սահմաններ)

7. Քառասն հասույն պահպանվող և (կամ) պատմամշակութային կամ շարժանկերի տարածքներ (պահպանական գոտիներ) \_\_\_\_\_ չկան \_\_\_\_\_  
(Այս բաժնի սահմանում, կարգավիճակը է ազդի)

8. (\*) Հատակագծային սահմանափակումներ \_\_\_\_\_ համաձայն գործող կոդի \_\_\_\_\_  
(Կանխում գտնել պատասխան, պարտականություններ, չբեռնադրվածության կերպարագրերն են այդ սահմանները կառուցում սահմանափակումներ, այդ թվում՝ ստորգրված(ա))

**ԼԱՍՈՎՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՐ**

*(ստորագրվում է) կամ զրույցների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կիր ներկայացվող սովորի պահանջով՝ Մ 1-500*

9. Հարտարազեղանակագծային պահանջներ \_\_\_\_\_ ՔՕԶ-ին համապատասխան \_\_\_\_\_  
(Կիրառվում է համապատասխան արտադրանքի և ներդրումների կառուցման փաստաթղթերի սահմանները սակայն բարեփոխման համար՝ փաստաթղթերի պահանջները կամ զրույց բարեփոխման համար՝ կարգավիճակ (կարգավիճակ) քաղաքացիական մեթոդներ սահմանները)

9.1. (\*) օրկերի ենթափոստեր կարմիր գծից (մետր) \_\_\_\_\_ համաձայն կոդի \_\_\_\_\_

9.2. (\*) ենթափոստերի հարևան հողակտրերից (օրկերներից) (մետր) \_\_\_\_\_ չսահմանված պահանջներ \_\_\_\_\_

9.3. թուղարելի բարձրություն (մետր) \_\_\_\_\_ մինչև 10 մ \_\_\_\_\_

9.4. կառուցապատման խոտի քանակը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին) \_\_\_\_\_ 1/5 \_\_\_\_\_

9.5. կառուցապատման սովոր (կառուցապատվող (անբնակելի) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին տոկոսներով (%)) \_\_\_\_\_ 70% \_\_\_\_\_

9.6. կանաչապատման սովոր (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)) \_\_\_\_\_ 30% \_\_\_\_\_

9.7. այլ պահանջներ \_\_\_\_\_ չկան \_\_\_\_\_

10. Հարամասում գտնվող շենքերի ու շինությունների բանջարե կամ տեղափոխման (ազատման) պահանջներ և սպիտակների ենթափոստեր \_\_\_\_\_ \_\_\_\_\_

11. Ստորգրվելու, կիսանկուղի և արտաքին \_\_\_\_\_ համաձայն կոդի \_\_\_\_\_

հարկերի տարածքների օգտագործման պայմանները	
12. (*) Ինժեներական ջանքեր և օտարախոյաններ	Պատկերներ, պլաներ և ռեզյումեներ և համապատասխան հարցազրույցներ ու լուսանկարներ
12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, օդաքի մատակարարում	Կցվում է _____ կցվում է _____ (Պատճառի մասնագիտացող կազմակերպության տեխնիկական պայմանները)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է _____ կցվում է _____ (Պատճառի մասնագիտացող կազմակերպության տեխնիկական պայմանները)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է _____ կցվում է _____ (Պատճառի մասնագիտացող կազմակերպության տեխնիկական պայմանները)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտակորը) տեղադիրքը	Կցվում է _____ կցվում է _____ (Պատճառի N 1 հաղկանակի 38-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված կազմակերպության տեխնիկական պայմանները)
12.5. քուլ հոսանքներ	չկա
12.6. աղբահանություն	համապատասխան
13. Տարածքի ինժեներական ետիպագրություն	համապատասխան (տեղեկի կազմակերպության քառկուսական, ինժեներական պարտականության միջոցառումները)
14. Բարեկարգում	կառավարողի կազմակերպության կողմից կատարվող պահպանման, խնամքի և վերականգնման աշխատանքներ, զբոսայգի և այլն
15. Երևարարական կույներ	չկա 22. Լոքներին համապատասխան (լինարարական կույների օգտագործման վերաբերյալ տարաբնույթի պայմանները)
16. Պաշտպանական կառույցներ	համապատասխան (պաշտպանական կառույցներում մտնող և ստեղծվող պարտականության միջոցառումները)
17. Հանարդեկույն պահանքներ	քառ գործող կարգի (Պահանքներին տեխնիկական պարտականության միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սովորաբար խմբերի պաշտպանության միջոցառումներ	
19. Երկազ միջավայրի պահպանում	քառ գործող կարգի (Երկազ միջավայրի վնասվածքի պարտականության միջոցառումները)
20. Երևարարության կազմակերպում	տարաբնույթի կազմակերպության հետ կապիտ պարտականության պարտականության շրջանակներում պահանքներ և պարտականության միջոցառումներ
21. Անարարների գործողության ժամկետը և	մինչև մեկ տարի

Նախագիծի մշակման փուլերը

Նշում են առաջարկվող քանակական չափերը և  
նախագիծ մշակման փուլերը

**ԼՐԱՏՈՒՑՈՒ ԳԱՏՄԱՆԵՐԸ**

22. Նախագիծային փաստաթղթերի փոխադրման քանակը ներկայացվող պատճեններ

Համաձայն մարտկոցային նախագիծի 22 կատարարային շրջանի 15-2-596 և հրաշման  
(Շրջանային Նախագիծային պլանային-պայմանագրային առանձին փոխադրման անունը կամ նախագիծը կապիտալ-պայմանագրային կամ կառուցված նախագիծային խումբային անունը)

23. Միջանկյալ համաձայնեցում

Համաձայն ընկերային կառուցվածքային կազմակերպության ղեկավարի կողմից մարտի կամ Նոյեմբերի Նախագիծային պլանային-պայմանագրային առանձին փոխադրման անունը կամ նախագիծը կապիտալ-պայմանագրային կամ կառուցված նախագիծային խումբային անունը

24. Հաստատված քանակություններ

Համաձայն պրոեկտ կարգի  
(Շրջանային Նախագիծային պլանային-պայմանագրային առանձին փոխադրման անունը կամ կարգը)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

ՀՀ ՄԻՆ ԿԿ (Սոցիալ - Զարգացման ֆինանսավարկման ֆոնդ) Նշում են այդպիսի համաձայնեցումներ ստանալու ամսաթիվը կամ համաձայնեցումներ ստանալու ամսաթիվը և այլ փոխադրման մարտկոցային կառուցվածքային խումբային անունը կամ նախագիծը կապիտալ-պայմանագրային կամ կառուցված նախագիծային խումբային անունը

26. Փաստային բաժանուցային պահանջարկների ստեղծում

Հյուս


27. Այլ պայմաններ

Հյուս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՍՏԱԹՎԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՄԱՐԻ ԿՐԿԱՐՑԱՆ

Կոստաթղթերի անունը ստեղծելով





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
**ՎԿԱՅԱԿԱՆ**  
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 11 օգոստոսի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատչանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

**1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)**

ՎԱՐԴԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՈՈՒԲԵՆԻ

**2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵՆՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ**

Մարզ Կոտայք, համայնք Պտղնի 23-րդ փողոց 8 հողամաս

**3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԸ**

Անշարժ գույքի առավանճառքի, գրավի պայմանագիր 30/07/2020թ. ա/մ 4016

**4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

Կադաստրային ծածկագիրը՝ 07-054-0332-0007

Մակերեսի չափը (հա)՝ 0.5

Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հասարակական կառուցապատման

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 11082020-07-0162, գաղտնաբառ՝ 6ZFGAYWFGZIT

Փաստաթղթի ինկոնությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի  
www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Էջ 1/2

**5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ**

- 1) Ն պատակային նշանակությունը՝
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

**Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ**

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ էդիտա Արզարյան  
 Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 11082020-07-0162, գաղտնաբառ՝ 6ZFGAYWFGZIT

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը (արտոյ է ստուգվել Կադաստրի կոմիտեի [www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am) կայքէջի միջոցով)

Էջ 2/2













Վարդան թրամանյանի  
յ/ա Արթուր Ավագյանին  
/հասցեն՝ ք. Երևան, Օհանյանի 7 շ. 37 բն./

« 26 » հոկտեմբերի 2020թ.  
N 150/23289

Առարկան՝ Տեխնիկական պայմանի տրամադրում

Հարգելի պարոն Ավագյան,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ ներկայացվում է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից մշակված ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմանը ՎՋ297/2020: Դրա հիման վրա անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա ունեցող կազմակերպությունում պատվիրել նախագծանախահաշվային փաստաթղթերի անվագն 2 փաթեթ և մյուս կոմունալ ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համաձայնեցնելուց հետո, այն «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից հաստատելու և միացման նախահաշիվ ստանալու նպատակով, ներկայացնել ընկերության Շահագործման սնօրիություն՝ հետևյալ հարցներին որևէ մեկով.

- 1. ք. Երևան, Փափազյան 2-րդ կրթ., Կովկասյան ՕԿԶ
- 2. ք. Գյումրի, Դադկոյի 2

Հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերի I բնօրինակ փաթեթը պահելու է ընկերությունում:

Տեղեկացում եմ նաև, որ նոր համակարգի կառուցման աշխատանքները սկսելուց առաջ հարկավոր է այդ մասին տեղեկացնել 1-85, 011 300185 հեռախոսակետերով միջոցով:

Հնդային աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է տեղական ինքնակառավարման մարմնից ստանալ շինարարական աշխատանքների կատարման թույլտվություն:

Նոր համակարգի կառուցման տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով հարկավոր է դիմել ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողություն իրականացնելու համար լիցենզավորված կազմակերպության, որոնց ցանկը հրապարակված է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պաշտոնական կայքում, օգտվել վերջինիս ծառայություններից և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերություն ներկայացնել կառուցված օբյեկտի վերաբերյալ կից ցանկում նշված փաստաթղթերը՝ ընկերության կողմից միացման աշխատանքներ կատարելու, անսարային հաշվառոի սարք տեղակայելու և Ձեզ հետ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /վերտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքելու համար:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում նշել, որ կառուցված նոր համակարգի սեփականության իրավունքի Հայաստանի Հանրապետության անհատույց հանձնումն իրականացվելու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:


Առդիր՝ 2 թերթ:  
Հարգանքով՝

*Wolfgang* Գլխավոր տնօրեն  
Մ. Շահինյան

Պատասխանատու՝  
Լ. Մարտիրոսյան

*L. Martirosyan*

ԳՂ, ք. Երևան, 375025, Առևմտյան 66ա  
Ֆեռ. 1-85, 0-800-00-185, 011-300-185  
Էլ. փոստ office@vjur.am  
Վեբ-էջ www.veolia.am



RA, Yerevan, 375025, Str. Abovyan 66a  
Ֆեռ. 0-800-00-185, 011-300-185  
Էլ. փոստ office@vjur.am  
Web site: www.veolia.am

*[Handwritten mark]*

Համակարգ	Ջրամատակարարում	Ջրահեռացում	Հեղեղատար	Հիդրամոխի տեղադրման
Կամուխիկացիայի գտնվելու վայրը	Երևան-Մևան մայրուղի			
Գործող խնդրվակի տրամագիծը, մմ շառնջ, տեսակը	d=800մմ, P=0.8մթն. պող.			
Միացման կետի տեղը	Երևան-Մևան մայրուղիով անցնող ջրաղծից			
Միացման տրամագիծը	Համաձայն նախագծի			
Ջրալափի տրամագիծը, դասը և տիպը				
Այլ պահանջներ	Ջրաշահական հանգույցի համար կառուցել դիտահոր	Ամերածելու է նախատեսել կեղտաջրերի մաքրման տեղային սարքավորումներով ջրահեռացման համակարգ	Համաձայն ՀՀՇՆ. 40-01.01-2014թ. 307 կետի	Հիդրամոխի միացման կետում կառուցել դիտահոր
Ջրամատակարարման գրափիկ	Շուրթորչա			

Կառուցման աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ է տվյալ որոշում լիցենզավորված կազմակերպությանը պատվիրել նախագծածանախառնաշվային փաստաթղթերի կազմում և դրանք համաձայնեցնել «Առլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ :

Կառուցման աշխատանքների տեխնիկական հսկողությանը, դիմողի հայեցողությամբ, իրականացնում է «Առլիա Ջուր» ՓԲԸ-ն կամ ընկերության պաշտոնական կայքում հրատարակված ցանկում ընդգրկված կազմակերպությունը՝ դիմողի հաշվին :Կառուցված նոր համակարգի միացումը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին իրականացնում է «Առլիա Ջուր» ՓԲԸ՝ դիմողի հաշվին :

Սույն տեխնիկական պայմանը ուժի մեջ է 1 (մեկ) տարի՝ գրանցման օրվանից սկսած, այն ենթակա է երկարացման՝ մինչև տեխնիկական պայմանի ժամկետի ավարտը՝ դիմողի կողմից ներկայացրած դիմումի հիման վրա:

Կառուցման ընթացքում, հողային աշխատանքներն իրականացնելիս, անհրաժեշտ է ձեռք բերել տվյալ համայնքի ղեկավարի, այլ իրավասու և/կամ շահագրգիռ մարմինների կամ անձանց բույլտարությունները և/ կամ համաձայնությունները:

Անճրեւաջրերի արտաքին կոյուղու բազակայության դիպքում անճրեւաջրերի հեռացման ներքին ցանցի բոլարկների ջրերը պետք է հեռացվեն շենքի մոտ նախատեսվող առվակներով (բաց բուրակ),ընդ որում, պետք է նախատեսել շենքի մոտ հողի մակերևույթի ողորտը բացառող մջջրցատուններ:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հասցեում «Առլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից ինքնահոս մատակարարվող ջրի ճնշումը 0.8մթն. է, անհրաժեշտ է տեղադրել պոմպ (GRUNDFOS, CHV կամ նմանատիպ) :

«Արարկիր» տեղամասի պետ՝



Գ.Գասաբյան

Ինժեներական խմբի պատասխանատու՝



Գ.Վարդանյան



Վատարտող՝ Վ.Վարդանյան

